

«Հ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե»

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 25/3

26 հունիսի 2012թ.

«Հ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 05.06.2012թ-ի նիստում քննության է առնվել Ա/Ձ Յուրի Ավագյանի և Ա/Ձ Կարինե Ավագյանի 10.05.2012թ-ի գանգատը «Հ ԿԱ ՊԵԿ ՕՇՎ 27.04.2012թ. թիվ 1001995 և թիվ 1001996 ստուգման ակտերի դեմ: Արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն վերոգրյալ ստուգման ակտերը թողնվել են անփոփոխ:

«Հ ԿԱ ՊԵԿ նախագահի 11.06.2012թ. թիվ 13 որոշման համաձայն, սույն գանգատի քննարկման և դրա վերաբերյալ որոշում ընդունելու «Հ օրենսդրությամբ սահմանված ժամկետը երկարաձգվել է 15 օրով:

Համաձայն «Հ ԿԱ ՊԵԿ նախագահի 13.02.2012թ. թիվ 1001995 և թիվ 1001996 հանձնարարագրերի «Հ օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում համապատասխանաբար Ա/Ձ Յուրի Ավագյանի և Ա/Ձ Կարինե Ավագյանի մոտ կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգում: Արդյունքում 27.04.2012թ-ին կազմվել են համապատասխանաբար թիվ 1001995 և թիվ 1001996 ստուգման ակտերը (այսուհետ նաև ստուգման ակտեր):

Ա/Ձ Յուրի Ավագյանի նկատմամբ 27.04.2012թ-ին կազմված թիվ 1001995 ստուգման ակտի վերաբերյալ.

Ստուգման ակտի 2-րդ կետով մասնավորապես արձանագրվել է, որ ներկայացված փաստաթղթերի, անհատ ձեռնարկատիրոջ հարկային գործի, «Հ ԿԱ ՊԵԿ տեղեկատվական բազայի տվյալների և հետաքննության վարչությունում առկա նյութերի ստուգմամբ պարզվեց, որ Ա/Ձ Յուրի Ավագյանը կատարել է հետևյալ խախտումները՝

- անհատ ձեռնարկատերը տարեկան եկամուտների մասին հաշվարկ 2008թ. համար, հարկային մարմնին չի ներկայացրել, իսկ 2009 և 2010թ.թ. համար հարկային մարմնին ներկայացվող տարեկան եկամուտների մասին պարզեցված հաշվարկների 2-րդ և 4-րդ բաժինների աղյուսակներում արտացոլված՝ ձեռնարկատիրական գործունեության գծով անհրաժեշտ ծախսերը և «եկամտահարկի մասին» «Հ օրենքով նախատեսված նվազեցումներն ավել է հաշվարկել համապատասխանաբար՝ 1432975 և 7644708 դրամի չափով, որն արդյունք է ծախսերի ձևակերպմամբ, առանց դրանց հարկման նպատակով փաստաթղթերով հիմնավորմամբ, հիմք՝ «Հ կառավարության 25.08.1998թ. թիվ 525 որոշմամբ սահմանված կարգի պահանջները: Անհատ ձեռնարկատերը չի կատարել «եկամտահարկի մասին» «Հ օրենքի 15-րդ, 27-րդ և 31-րդ հոդվածներով նախատեսված պահանջները: Ստուգմամբ Ա/Ձ-ի 2008թ-ի գործունեության հետ կապված անհրաժեշտ և հարկման նպատակով փաստաթղթերով հիմնավորված ծախսերը, ինչպես նաև «եկամտահարկի մասին» «Հ օրենքով նախատեսված նվազեցումները կազմեցին 553220 դրամ:

- անհատ ձեռնարկատերը 2009թ. համար հարկային մարմնին ներկայացվող տարեկան եկամուտների մասին պարզեցված հաշվարկի 2-րդ բաժնի աղյուսակում ընդգրկված 14-րդ տողում արտացոլված ձեռնարկատիրական գործունեությունից եկամուտը, պակաս է հաշվարկել 4.270.000 դրամի չափով, իսկ 2010թ-ի համար ավել է հաշվարկել նույն գումարի չափով: Նշվածն արդյունք է Ա/Ձ-ի կողմից եկամուտների ձևակերպման (հաշվարկման)՝ առանց դրանց հաշվեգրման սկզբունքի (Ա/Ձ եկամուտը ձևակերպել է գումարի փաստացի ստացումով): Ա/Ձ-ի կողմից չի կատարվել «եկամտահարկի մասին» «Հ օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված պահանջները: Ստուգմամբ Ա/Ձ-ի 2008թ. ձեռնարկատիրական գործունեությունից ստացված համախառն եկամուտը կազմեց 1.572.000 դրամ, որը արտացոլված է Ա/Ձ-ի հսկիչ-դրամարկղային մեքենայի ֆինակալային հաշվետվության տվյալներով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «եկամտահարկի մասին» «Հ օրենքի 4-րդ, 5-րդ, 6-րդ, 8-րդ, 12-րդ, 14-րդ, 27-րդ և 31-րդ հոդվածներով 2009թ. և 2010թ. համար պակաս հարկվող եկամուտ է ներկայացվել համապատասխանաբար՝ 5.702.975 դրամ և 3374708 դրամ, իսկ Ա/Ձ-ի 2008թ-ի հարկվող եկամուտը կազմեց 1018780 դրամ, հետևաբար համաձայն նույն օրենքի 18 հոդվածի, հաշվարկվող եկամտահարկը 2009թ. և 2010թ. համար պակաս է ներկայացվել համապատասխանաբար՝ 657.600 և 674.950 դրամ, իսկ 2008թ-ի եկամտահարկը կազմեց 107756 դրամ, որը ենթակա է վճարման բյուջե:

Հիմք ընդունելով «Հարկերի մասին» «Հ օրենքի 23-25-րդ և 27-րդ հոդվածների դրույթները եկամտահարկի գծով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 3.013.718 դրամ:

Ստուգման ակտի 5-րդ կետով մասնավորապես արձանագրվել է, որ ներկայացված փաստաթղթերի, անհատ ձեռնարկատիրոջ հարկային գործի, ՀՀ ԿԱ ՊԵԿ տեղեկատվական բազայի տվյալների և հետաքննության վարչությունում առկա նյութերի ստուգմամբ պարզվեց, որ Ա/Ձ Յուրի Ավագյանը 2008թ. հունվարի 1-ից հունվարի 25-ը ներառյալ, հարկային մարմնին չի ներկայացրել տվյալ տարում պարզեցված հարկ վճարող համարվելու համար սահմանված ձևով հայտարարագիր, իսկ 2009թ-ին ապրանքների մատակարարումից հաշվարկված եկամուտների 100 տոկոսը վերաբերվել է մեկ հարկ վճարողից ստացման ենթակա եկամուտներին՝ «Գանգրահեր տղա» ՍՊԸ-ից ստացված եկամուտներին:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ և 5-րդ հոդվածի, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի «գ» ենթակետի դրույթները, անհատ ձեռնարկատերը 2008 և 2010թ.թ. համարվում է ԱԱՎ վճարող: Նշված տարիների իրացումը ձևավորվել է միայն շրջանառելի՝ բազմակի օգտագործման տարայի վաճառքներից, բացառությամբ ներքոհիշյալ թվարկվածների, հետևաբար ղեկավարվելով «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերության դրույթներով՝ Ա/Ձ-ի մոտ ԱԱՎ-ով հարկվող շրջանառություն չի առաջանում:

Ա/Ձ-ն «Գանգրահեր տղա» ՍՊԸ-ին վաճառել է ապակու ջարդոն, որոնց մասով կազմվել են թվով հինգ հաշվարկային հաշիվներ (նշված են ակտում): Ա/Ձ-ի կողմից չի կատարվել «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին պարբերության պահանջները:

Ելնելով վերոգրյալից ինչպես նաև հիմք ընդունելով «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 5-րդ, 6-րդ, 8-րդ, 9-րդ, 31-րդ, 32-րդ հոդվածների դրույթները՝ 2010թ. 2-րդ և 3-րդ եռամսյակների համար հաշվարկվում է ԱԱՎ՝ գումարով 134100 դրամ, որը ենթակա վճարման քյուզե:

Ստուգմամբ պարզվել է նաև, որ Ա/Ձ-ն «Արմենիա տելեֆոն կոմպանի» ՓԲԸ-ից ստացել է հարկային հաշիվ՝ գումարով 268.1 հազ. դրամ (ԱԱՎ 55.6 հազ. դրամ), որի վերաբերյալ սահմանված կարգով տեղեկություն չի ներկայացվել:

Հիմք ընդունելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ, 24-րդ հոդվածների, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ պարբերության և 43.1 հոդվածների դրույթները ԱԱՎ-ի գծով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 332.930 դրամ:

Ստուգման ակտի 9-րդ կետով մասնավորապես արձանագրվել է, որ ներկայացված փաստաթղթերի, անհատ ձեռնարկատիրոջ հարկային գործի, ՀՀ ԿԱ ՊԵԿ տեղեկատվական բազայի տվյալների և հետաքննության վարչությունում առկա նյութերի ստուգմամբ պարզվեց, որ Ա/Ձ Յուրի Ավագյանը 2008թ. հունվարի 1-ից հունվարի 25-ը ներառյալ, հարկային մարմնին չի ներկայացրել տվյալ տարում պարզեցված հարկ վճարող համարվելու համար սահմանված ձևով հայտարարագիր: Հիմք ընդունելով «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ և 5-րդ հոդվածի դրույթները, անհատ ձեռնարկատերը 2008թ-ի համար չի համարվում պարզեցված հարկ վճարող:

Ստուգման ակտի 16-րդ կետով մասնավորապես արձանագրվել է, որ ներկայացված փաստաթղթերի, անհատ ձեռնարկատիրոջ հարկային գործի, ՀՀ ԿԱ ՊԵԿ տեղեկատվական բազայի տվյալների և հետաքննության վարչությունում առկա նյութերի ստուգմամբ պարզվեց, որ Ա/Ձ Յուրի Ավագյանը 2008, 2009 և 2010թթ համար ներկայացված տարեկան եկամուտների մասին հայտարարագրերի 2-րդ բաժինների աղյուսակների 22-րդ տողերում արտացոլված եկամուտների ստացման հետ կապված անհրաժեշտ ծախսերն ավել է հաշվարկել համապատասխանաբար՝ 2.314.800, 1.604.500 և 8.703.840 դրամ, որոնք արդյունք է ծախսերի ձևակերպմամբ, առանց դրանց հարկման նպատակով փաստաթղթերով հիմնավորմամբ, իսկ նույն տարիների համար ներկայացված հայտարարագրերի 21-րդ տողերի գումարները (գործունեությունից ստացված եկամուտները)՝

- 2008թ-ի համար ավել էր հաշվարկել 1.000.000 դրամի չափով,
- 2009թ-ի համար պակաս էր հաշվարկել 4.270.000 դրամի չափով,
- 2010թ-ի համար ավել էր հաշվարկել 4.270.000 դրամի չափով:

Ա/Ձ-ի կողմից չի կատարվել «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետով նախատեսված պահանջները: Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով սահմանված՝ սոց.վճարների հաշվարկման և վճարման կարգով և նույն օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված դրույթները, 2008, 2009 և 2010թթ համար պակաս սոց. վճարի հաշվարկման օբյեկտներ է ներկայացրվել համապատասխանաբար՝ 1.314.800 դրամ, 5.874.500 և 4.433.849 դրամի չափով, հետևաբար նույն հոդվածի համաձայն հաշվարկվող սոց. վճարի գումարները՝ հաշվի առած հաշվետու տարվա սոց. վճարների նվազագույն գումարները, պակաս է ներկայացվել համապատասխանաբար՝ 149.340, 171.525 և 363.541 դրամի չափով:

Հիմք ընդունելով <Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթները սոց. վճարի գծով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 1.469.766 դրամ:

Ա/Ձ Կարինե Ավագյանի նկատմամբ 27.04.2012թ-ին կազմված թիվ 1001996 ստուգման ակտի վերաբերյալ.

Ստուգման ակտի 2-րդ կետով մասնավորապես արձանագրվել է, որ ներկայացված փաստաթղթերի, անհատ ձեռնարկատիրոջ հարկային գործի, ՀՀ ԿԱ ՊԵԿ տեղեկատվական բազայի տվյալների և հետաքննության վարչությունում առկա նյութերի ստուգմամբ պարզվեց, որ Ա/Ձ Կարինե Ավագյանը 2009թ. համար ներկայացվող տարեկան եկամուտների մասին պարզեցված հաշվարկների 2-րդ և 4-րդ բաժինների աղյուսակներում արտացոլված՝ ձեռնարկատիրական գործունեության գծով անհրաժեշտ ծախսերը և <Եկամտահարկի մասին> ՀՀ օրենքով նախատեսված նվազեցումներն ավել է հաշվարկել 11762474 դրամի չափով, որն արդյունք է ծախսերի ձևակերպմամբ, առանց դրանց հարկման նպատակով փաստաթղթերով հիմնավորմամբ, հիմք՝ ՀՀ կառավարության 25.08.1998թ. թիվ 525 որոշմամբ սահմանված կարգի պահանջները: Անհատ ձեռնարկատերը չի կատարել <Եկամտահարկի մասին> ՀՀ օրենքի 15-րդ և 27-րդ հոդվածներով նախատեսված պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <Եկամտահարկի մասին> ՀՀ օրենքի 4-րդ, 5-րդ, 6-րդ, 8-րդ, 12-րդ, 14-րդ, 27-րդ և 31.2-րդ հոդվածներով 2009թ. համար պակաս հարկվող եկամուտ է հաշվարկվել 11296379 հազ. դրամ: Համաձայն նույն օրենքի 31.2 հոդվածի հաշվարկվող եկամտահարկը 2009թ. համար պակաս է ներկայացվել 1110032 դրամ:

Հիմք ընդունելով <Հարկերի մասին> ՀՀ օրենքի 23-րդ, 25-րդ և 27-րդ հոդվածների դրույթները եկամտահարկի գծով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 2383793 դրամ:

Ստուգման ակտի 16-րդ կետով մասնավորապես արձանագրվել է, որ ներկայացված փաստաթղթերի, անհատ ձեռնարկատիրոջ հարկային գործի, ՀՀ ԿԱ ՊԵԿ տեղեկատվական բազայի տվյալների և հետաքննության վարչությունում առկա նյութերի ստուգմամբ պարզվեց, որ Ա/Ձ Կարինե Ավագյանը 2008 և 2009թթ համար ներկայացված տարեկան եկամուտների մասին հայտարարագրերի 2-րդ բաժինների աղյուսակների 22-րդ տողերում արտացոլված՝ եկամուտների ստացման հետ կապված անհրաժեշտ ծախսերն ավել է հաշվարկել համապատասխանաբար՝ 1.750.000 դրամ և 12.149.955 դրամ, որոնք արդյունք է ծախսերի ձևակերպմամբ, առանց դրանց հարկման նպատակով փաստաթղթերով հիմնավորմամբ:

Ա/Ձ-ի կողմից չի կատարվել <Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին կետի <գ> ենթակետով նախատեսված պահանջները: Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով <Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի և 5-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթները, 2008 և 2009թթ համար պակաս սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտներ է հաշվարկվել համապատասխանաբար՝ 1.750.000 դրամ և 12.149.955 դրամ գումարների չափով, հետևաբար նույն հոդվածի համաձայն հաշվարկվող սոց. վճարի գումարները՝ հաշվի առած հաշվետու տարվա սոցիալական վճարների նվազագույն գումարները, պակաս է ներկայացվել համապատասխանաբար՝ 25.126 և 337.481 դրամ գումարների չափով (հաշվարկվում է 3 %):

Հիմք ընդունելով <Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթները սոցիալակն վճարի գծով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 778696 դրամ:

Ստուգման ակտի 17-րդ կետով, աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու համար կիրառվել է <Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ կետի վերջին պարբերությամբ նախատեսված պատասխանատվության միջոցը՝ գումարով 60.000 դրամ:

Ա/Ձ Յուրի Ավագյանի և Ա/Ձ Կարինե Ավագյանի գանգատում ընդամենը նշված է, որ 27.04.2012թ-ի թիվ 1001995 և 1001996 ակտերի հետ համաձայն չեն, քանի որ ոչ իրենց մեղքով պարզեցված հարկատեսակից անցել են ընդհանուր հարկման դաշտ: Մնացած բոլոր հարցերը դիմումատուները խնդրում են մանրամասն ուսումնասիրել:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով Ա/Ձ Յուրի Ավագյանի և ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց ներկայացված փաստըկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ եզրակացության, որ գանգատը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ:

Ա/Ձ Յուրի Ավագյանի նկատմամբ կազմված ստուգման ակտի վերաբերյալ. Ստուգման ակտով եկամտահարկի գծով լրացուցիչ պարտավորություններ են առաջադրվել ստուգվող ժամանակահատվածում Ա/Ձ Յուրի Ավագյանի կողմից կատարված հետևյալ խախտումների համար: Մասնավորապես, անհատ ձեռնարկատերը 2008թ. համար տարեկան եկամուտների մասին

հաշվարկ հարկային մարմինն չի ներկայացրել, իսկ 2009 և 2010թթ համար հարկային մարմինն ներկայացված տարեկան եկամուտների մասին պարզեցված հաշվարկներում ձեռնարկատիրական գործունեության գծով անհրաժեշտ ծախսերը և «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքով նախատեսված նվազեցումներն ավել է հաշվարկել համապատասխանաբար՝ 1432975 և 7644708 դրամի չափով: Խախտվել են ՀՀ կառավարության 25.08.1998թ. թիվ 525 որոշմամբ սահմանված կարգի և «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ, 27-րդ, 31-րդ հոդվածի պահանջները:

Բացի այդ, անհատ ձեռնարկատերը 2009թ. համար հարկային մարմինն ներկայացված տարեկան եկամուտների մասին պարզեցված հաշվարկում ձեռնարկատիրական գործունեությունից եկամուտը պակաս է հաշվարկել 4.270.000 դրամի չափով, իսկ 2010թ-ի համար ավել է հաշվարկել նույն գումարի չափով: Նշվածն արդյունք է Ա/Ձ-ի կողմից եկամուտների ձևակերպման ընթացքում հաշվեգրման սկզբունքի չկիրառման, ինչի հետևանքով խախտվել է «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի պահանջները: Արդյունքում հիմք ընդունելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-25-րդ և 27-րդ հոդվածների դրույթները եկամտահարկի գծով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 3.013.718 դրամ:

ԱԱՀ-ի գծով լրացուցիչ առաջադրված պարտավորությունների վերաբերյալ նշվեց, որ Ա/Ձ Յուրի Ավագյանը 2008թ. հունվարի 1-ից հունվարի 25-ը ներառյալ հարկային մարմինն չի ներկայացրել տվյալ տարում պարզեցված հարկ վճարող համարվելու համար հայտարարագիր, իսկ 2009թ-ին ապրանքների մատակարարումից հաշվարկված եկամուտների 100 տոկոսը վերաբերվել է մեկ հարկ վճարողից ստացման ենթակա եկամուտներին: Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ և 5-րդ հոդվածի, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի «գ» ենթակետի դրույթները, անհատ ձեռնարկատերը 2008 և 2010թ.թ. համարվել է ԱԱՀ վճարող:

Ինչ վերաբերում է գանգատում նշված այն պնդմանը, որ պարզեցված հարկման դաշտից ընդհանուր հարկման դաշտ տեղափոխվել է ոչ իր մեղքով, ապա համաձայն «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի. «Հարկերը ճիշտ հաշվարկելու, ժամանակին վճարելու և հարկային օրենսդրության մյուս պահանջները պահպանելու պատասխանատվությունը, հարկային օրենսդրությամբ այլ բան սահմանված չլինելու դեպքում, կրում են հարկ վճարողները և դրանց (ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պաշտոնատար անձինք»:

Ստուգման ակտով սոցիալական ապահովության վճարների գծով լրացուցիչ պարտավորություններ են առաջադրվել Ա/Ձ Յուրի Ավագյանի կողմից կատարված հետևյալ խախտումների համար: Մասնավորապես, 2008, 2009 և 2010թթ համար ներկայացված տարեկան եկամուտների մասին հայտարարագրերում եկամուտների ստացման հետ կապված անհրաժեշտ ծախսերն ավել է հաշվարկել համապատասխանաբար՝ 2.314.800, 1.604.500 և 8.703.840 դրամ, որն արդյունք է ծախսերի ձևակերպմամբ, առանց դրանց հարկման նպատակով փաստաթղթերով հիմնավորմամբ: Ա/Ձ-ի կողմից խախտվել են «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետով նախատեսված պահանջները: Արդյունքում հիմք ընդունելով «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթները սոց. վճարի գծով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 1.469.766 դրամ:

Ա/Ձ Կարինե Ավագյանի նկատմամբ կազմված ստուգման ակտի վերաբերյալ.

Ստուգման ակտով եկամտահարկի գծով լրացուցիչ պարտավորություններ են առաջադրվել ստուգվող ժամանակահատվածում Ա/Ձ Կարինե Ավագյանի կողմից կատարված հետևյալ խախտումների համար: Մասնավորապես, 2009թ. համար ներկայացված տարեկան եկամուտների մասին պարզեցված հաշվարկներում ձեռնարկատիրական գործունեության գծով անհրաժեշտ ծախսերը և «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքով նախատեսված նվազեցումներն ավել է հաշվարկվել 11762474 դրամի չափով: Խախտվել են ՀՀ կառավարության 25.08.1998թ. թիվ 525 որոշմամբ սահմանված կարգի և «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ և 27-րդ հոդվածներով նախատեսված պահանջները: Արդյունքում հիմք ընդունելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ, 25-րդ և 27-րդ հոդվածների դրույթները եկամտահարկի գծով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 2383793 դրամ:

Ա/Ձ Կարինե Ավագյանի կողմից 2008 և 2009թ.թ. համար ներկայացված տարեկան եկամուտների մասին հայտարարագրերում եկամուտների ստացման հետ կապված անհրաժեշտ ծախսերն ավել հաշվարկելու համար, համապատասխանաբար՝ 1.750.000 դրամ և 12.149.955 դրամ, հիմք ընդունելով «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթները սոցիալական վճարի գծով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 778696 դրամ:

Բացի այդ, աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու համար Ա/Ձ Կարինե Ավագյանի նկատմամբ կիրառվել է <Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ կետի վերջին պարբերությամբ նախատեսված պատասխանատվության միջոցը՝ գումարով 60.000 դրամ:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի <Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին> N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, Հանձնաժողովի որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ: Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է դրական եզրակացություն:


Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Ստուգման ակտերը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ